

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպեկ.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՒՆԱՅԻՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Հին երգ. Ղեկավարող սկզբունքներ.— Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մի գրուելի յօդուած. Ներքին լուրեր.
— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վանքի պանդոխտներ.
Նամակ Ամերիկայից. Նամակ Թուրքիայից. Ար-
տաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-
ԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Թուրքիա-
յից.

ՀԻՆ ԵՐԳ

Այս առաջին անգամը չէ, տասներորդ, հա-
րիւրերորդ անգամը չէ, որ խաւարածիւր ռուս
մի քանի թերթեր անտեղի և անհիմն
կերպով մեղադրանքներ են թափում տե-
ղացի ազգութիւնների դէմ, աշխատելով
ստեղծել զարմանք նրանց և կասկածելի կա-
ցուցանել:

Իսկ հին երգ է:
«Մշակը» իր 22 տարեկան գոյութեան
ընթացքում անթիւ անհամար անգամ ըս-
տիպված է եղել բողոքելու այդ տեսակ
ստոր յարձակումների, անարդար մեղադ-
րանքների դէմ, ցոյց տալով մի և նոյն ժա-
մանակ, որ այդ տեսակ գրգռութիւննե-
րը հետեանք են կամ անձնական հակա-
կրօնական, կամ թաղային կեղծոտ նպա-
տակների:

Նոյնը արել է և տեղական ռուս մամուլը:
Սակայն անօգուտ:

2րդ նայած տեղական մամուլի այդ ար-
դար բողոքին, չի նայած հարիւրաւոր,
հազարաւոր հիմնական, էական հերքում-
ներին, վարձկան, խաւարածիւր ռուս մի
քանի թերթեր էլ շարունակում են իրանց
հին երգը, էլի շարունակում են տեղի ան-
տեղի հայհոյանքներ թափել ինտելիգեն-
ցիաներ անկողնի հաւատարմներ, որ կատար-
վում է մի սպանելու, կործանելու հարստա-
հարութիւն, որ պատրաստվում է հակա-
կառավարական շարժում, և այլն, և այլն,
և այլն...

Սյոթ թերթերը հասել են սանձարձակ
անաւթութեան.— Բողոքարկում տեղի է
ունենում մի որ և է դէպք, հայերին են
հայհոյում առիթ է լինում խօսելու ին-
տելիգենցիաների մասին, մէջ են բերում կողմնա-
պոկմիկ է սկսվում խաւարածիւր և աղա-
տամիւր մամուլի մէջ, օրհուրանները էլի
կովկասեան ազգաբնակչութիւններին են հայ-
հոյում հրապարակ է դալիս զաղթա-

կանութեան մի հարց, նոյն խաւա-
րածիւր մամուլը էլի հին երգն է սկսում,
բոլոր չարիքների աղբիւրը հայերին համա-
րելով...

Եւ այդ բոլորը անվերջ կերպով, անդա-
դար, ամեն ամիս, տարեց տարի...

Կար ժամանակ, որ մենք կարծում էինք,
թէ այդ բոլոր գրգռելի յարձակումները և
սե գրգռութիւնները առաջ են դալիս
այն բանից, որ այս կամ այն խաւարածիւր
օրգանը, այս կամ այն գրողը ծանօթ չէ
կովկասեան ազգերին, նրանց ձգտումներին,
կուլտուրական կեանքին:

Սակայն մենք համոզվեցինք, և անկաս-
կած մեզ հետ միասին և ամբողջ տեղա-
կան մամուլը, որ պատճառը այդ չէ:

Խաւարածիւր մամուլը շատ լաւ գիտէ,
որ իր յարձակումները անհիմն են, իր մե-
ղադրանքները ստոր գրգռութիւններ,
բայց և այնպէս շարունակում է իր հակա-
կրիկ և ֆիստակար ընթացքով առաջ դը-
նալ, որովհետեւ դրա մէջ է տեսնում իր
աշխարհիկ հիմքը, իր շահը...

Գրգռել այս կամ այն ժողովրդի աղգա-
տիւրական նեղ ինտելիկաները, ցոյց տալ,
որ ինքն կանխած է պետական շահերի
պաշտպանութեան դիմին, հաւատարմներ, որ
ինքն ընդունակ է խորը թափանցել և
տեսնել, թէ որ կողմն է փառնող սատա-
նիստ քաղաքականութեան, արդարաւոր ձեւա-
նայ և իրան ցոյց տալ թշնամի այս կամ
այն ազգութեան իր թէ հարստահարիչ,
ձգտումներ, և վերջապէս այդ բոլորի վրա
հիմնվելով թափուկ դարկել և սակ թէ
«մենք ենք հայրենիքի անկեղծ պաշտ-
պանները».— «սա խաւարածիւր թերթերի
միակ նպատակը, միակ փափակը, միակ իդ-
էք, միակ տենչանքը...

Եւ այդ բոլորը նրա համար, որ պահ-
պանել իրանց դարձելի գոյութիւնը, որ ա-
պացուցանեն, թէ իրանց աւելորդ չեն...

Շուտով կը լրանայ մի ամբողջ դար, ինչ
Ռուսաստանի տիրապետութիւնը տարած-
վել է Անդրկովկասի վրա: Սյոթ ահադին
ժամանակին, այդ երկար տարիների ընթաց-
քում խաւարածիւր թերթերը անթիւ
անհամար անգամ մեղադրեցին տեղա-
կան ազգերին հակակառավարական ձրդ-
տումներին, փառնաւոր դիտաւորութիւն-
ներին մէջ, ամեն տեսակ կասկածներ յարու-
ցին, զանազան մեղադրանքներ հնարեցին,

աշխատեցին համոզել, որ այսօր թէ վաղը
երևան կը դան այդ դադարի դատաւորու-
թիւնները.— բայց և այնպէս մինչև այսօր
էլ մի ամբողջ դարի ընթացքում տեղի
չունեցաւ և ոչ մի դէպք, որ կասկած դը-
ցեր մեր երկրի վրա, որ կասկած գցեր
հայերի և առհասարակ տեղական ազգու-
թիւնների և կառավարութեան մէջ:

Ընդհակառակն, տեղական ամբողջ ազգա-
բնակչութիւնը, առանց խտրութեան ազգերի
և կրօնների, միշտ կապված է եղել ընդ-
հանուր Ռուսաստանի հետ ամենաբարեկա-
մական, ամենասանկեղծ զգացմունքներով և
սիրելով իր երկիրը, իր լեզուն, նա նոյն
սիրելով սիրում է ընդհանուր հայրենիքը
Ռուսաստանը, որի հետ ինքը կապված է
ոչ միայն պետական, այլ ընդհանուր քա-
ղաքակրթական շահերով:

ՂԵԿԱՎԱՐՈՂ ՍԿՋՐՈՒՆԵՆԵՐ

Հայոց կեանքի մէջ վերջին տարիներս
աչքեր է ընկնում ուշադրութեան արժանի մի
երևոյթ:

Հայ հասարակութիւնը բաժանված է
կուսակցութիւնների, որոնցից խրաբանչիւրը
ընականապէս ըստ իր անունից հետո
չէր քչ գնկավարվել մի որ և է սկզբուն-
քով, ունենալ իր profession de foi:

Սակայն այդ խմբերից մի քանիսի համար
աւելի նշանակութիւն ունեն անձնաւորու-
թիւնները, քան սկզբունքը, և նրանք ա-
մենայն հեշտութեամբ հաշուվում և միա-
նում են այն զանազան անձնաւորութիւննե-
րի հետ, երբ այդ անձնաւորութիւնները
այս կամ այն պատճառով իրանց հաճելի
են, երբ նրանց օգնութեամբ յոյս ունեն
հասնել իրանց մտկոյն նպատակներին:

Այլ է հասարակութիւնն այն համա-
խմբութիւնների գործունէութեան եղանակը, ո-
րոնք ղեկավարվում են յայտնի սկզբունքնե-
րով, որոշ գաղափարներով: Նրանց գործու-
նէութեան ընթացքը որոշվում է համա-
ձայն այն դաւանանքի, որ նրանք ունեն:
Անձնական հաշիւները, մասնաւոր համակ-
րութիւնները և հակակրօնութիւնները այդ-
տեղ արտաքինում են և տեղի տալիս սկզ-
բունքներին ու ծրագիրներին: Մարդկանց
գործողութիւնները ղեկավարվում են ոչ
խնամական, ոչ բացառիկ ազդեցութիւնով:

այլ ընդհանուր ծրագրով, որոշ գաղափա-
րով, որոշ սկզբունքներով:

Սյոթ ղեկավարող սկզբունքները պէտք է
մշտապէս կանգնած լինեն մարդկանց առաջ
և թոյլ չը տան շեղվելու այն ճանապարհ-
հից, որ տանում է դէպի ծրագրած նպա-
տակը: Կորան, մոռացվեցին սկզբունքները,
կը կորչէ և մարդկանց միութեան կապը,
երկպառակութիւն կը սկսվի նրանց մէջ, և
նրանք այլ ևս միմեանց չեն հասկանալ:

Սյոթ դրութեան մէջ են մշտապէս մեր
հակառակորդները, այսօր նրանք քարոզում
են մի սկզբունք, մի գաղափար իբրեւ ղեկա-
վարող շարժառիթ, և ահա մի քանի օր
չանցած նրանք մոռանում են այդ բոլորը
և մասնաւոր շահերի ծննդան տակ իրանց
երէկոյն ասածն ու քարոզածը հերքում
են: Այսօր նրանք պաշտպանում են իրանց
բոլոր ոյժով մի գաղափար և հայհոյում են
բոլոր աշխարհը, իսկ վաղը նրանք պատ-
րաստ են նոյն օրհասական ոյժով հերքել
երէկոյն ասածը և դարձեալ հայհոյել ա-
մենքին: Այսօր նրանք պաշտպան են մի կա-
նոնադրութեան, վաղը նրան թշնամի: Այ-
սօր անպայման պարտաւորեցուցիչ է հըռ-
չակվում կոնգրալը, իսկ վաղը նա չի
արարում է օրինական ոյժից դուրս մի կար-
գադրութիւն:

Սրբ չը է.— ընդհանուր սկզբունքներ,
պարտաւորեցուցիչ գաղափարներ, երբ տե-
սակէտները փոխվում են ամեն օր, ամեն
ժամ,—այն ժամանակ կորչում է մարդկանց
համախմբան գաղափարական շարժառիթը
և քայքայվում է եղած կաղնիկը: Սակայն
Այժմ մենք ակնատես ենք այն երե-
ւոյթին, թէ ինչպէս մեր հակառակորդ
կուսակցութեան կազմակերպութիւնը քայ-
քայվում է շուրջիւ նրա գործողներին բա-
րոյական և գաղափարական սնանկութեան,
շնորհիւ այն բանի, որ նրանց ղեկավարում
են ոչ թէ որոշ սկզբունքներ, ոչ թէ սիրած
գաղափարներ, այլ կողմնակի հաշիւներ,
մասնաւոր շահեր:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ԶՁՈՒՆԵԼ ԹՈՒՆՈՒՄ

«Московскія Вѣдомости» լրագրի № 199-ի
մէջ տպագրված է մի վերին աստիճանի զոռու-

պեցաւ, իր նուրբ դիւանագիտական հաշիւները
հոս ալ սխալ եւան, վրիպեցան:

Այժմեան կրօնական և քաղաքական ժողովնե-
րը ապօրինաւոր են և 3 տարի է, որ Ալեքսանդր
և Սիմօն-պէյի բռնութեան, սպառնալիքներու և
փախելու ներքե անուանական կերպով կը շա-
րունակէին իրենց ապօրինի պաշտօնները: Քաղա-
քական և կրօնական ժողովը անդամներու պաշ-
տօնավարութեան չըլմանը, ըստ սահմանադրու-
թեան, երկու տարի կը տեւ և ամեն երկու տա-
րին անգամ մը երեսփոխանական ժողովը նոր
ընտրութիւններ կը կատարէ: Արդի կրօնական և
քաղաքական ժողովներու պաշտօնավարութեան
ժամանակը, ինչպէս ըսինք, 3 տարիէն ի վեր է
լրացած է, և ըստ օրինի, նոր ընտրութիւններ
պէտք է կատարվեն այժմ, հետագայ արդի ա-
պօրինի կրօնական և քաղաքական ժողովներու
անդամները իրաւունք չունեն որ և է ընտրու-
թիւն կատարել, պաշտօնավարել: Այս մարդիկ
եթէ ցարդ կարդարանային, եթէ երբեք կարելի է
արդարանալ, ըսելով թէ ինչ կրնանք ընել, երբ
պատրիարք, Սիմօն-պէյ կը սպառնան գոնէ այժմ
պարտաւոր են ընելու 3 տարեկան չըլմանը և բա-
ցարձակ հրաժարել, մասնաւոր որ այժմ ալ չը
կայ դաւաճան Ալեքսան, Սիմօն-պէյ և ընկերու-
թիւնը:

Կրօնական և քաղաքական ժողովը անդամնե-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՆՈՒՄՅՈՅ

Կ. Պօլիս, յուլիսի 16-ին

Թունիս 18-ի թղթակցութեան մէջ գրած
էի, որ Ալեքսանդր հրաժարականը պարունակող
թէգքերէի մէջ ի միջի այլոց ըսուած էր, որ խա-
կոյն, առանց յետաձգումներու, խառն ժողով
կազմին և պատրիարքի ընտրութեան ձեռնար-
կեն:

Պատրիարքական ընտրութեան այս հրամանը
բոլորովին անսպասելի էր, որովհետեւ խառն ժո-
ղովը իրաւունք չունէր պատրիարքի ընտրութիւն
կատարել. ըստ սահմանադրութեան, պատրիար-
քական ընտրութիւնը պէտք է կատարէր ազգային
երեսփոխանական ժողովը, այդ երեսփոխանական
ժողովին իրաւունքն էր, և խառն ժողովը իրա-
ւունք չունէր, չէր կրնար պատրիարքական ընտ-
րութիւն կատարել: Ինչո՞րք շատ ու շատ փա-
փուկ էր, պատասխանատուութիւնը ազգի առջև
կարի ծանր: Թիւրք կառավարութեան այս յա-
ղուզն և համարձակ քայլը, այս ծանր հրամանը
առանց մտածութեան, առանց որոշ դիտաւորու-
թեան, որոշ նպատակի չէր:

Թիւրք կառավարութիւնը, սարսափել տպաւո-
րութեան տակ, խառն ժողովով պատրիարքական
ընտրութիւն կատարել տալով՝ ցարդ ազգիկալ
ազգային երեսփոխանական ժողովը խնդրել մի
անգամ ընդմիջու լուծած կըլար, վերջին հարուա-
ծը կուտար, կը թաղէր վերջնապէս ազգային ժո-
ղովը խնդրել.— և այսպիսով պատրիարքա-
կան ընտրութիւնը խառն ժողովով օրինական
ոյժ և հաստատութիւն կը ստանար:

Խառն ժողովը անդամները, կրօնական թէ
աշխարհական, որքան ալ անընդունակ, երկչոտ,
վաճառված, բայց և այնպէս զգալի խնդրող
փախկութիւնը, զգացին իրենց ծանր պատասխա-
նատուութիւնը ազգի, առջև և տատանեցան,
կարանցեան հրամանը կատարել: Անդամներու
մէջ չիփթութիւնը մեծ էր: Հրամանի գործա-
դրութիւնը կատարելով դաւաճանութիւն, կատա-
րեալ մասնութիւն, ազգային իրաւանց վերջնա-
պէս ջնջում, կործանում ըսել էր, և անդամներէն
ամեն ոք այս դիտակցութիւնը ունէր:

Փախի մը խորհրդակցութիւններէ ետքը քա-
ղաքական ժողովը երկրորդ աստիճանական (Սիմոն-
պէյը առաջին աստիճանական էր) Տիւրքան խառ-
նական, որ մի և նոյն ժամանակ Բ. Կրան պաշտո-
նեպէ է, դնաց դատական գործոց նախարարին
պատրիարքական ընտրութեան մասին խորհրդակ-
ցութեան: Այդ խորհրդակցութիւնը ունեցաւ այն

արդիւնքը, որ նախկին օրոշումը, այսինքն պատ-
րիարքական ընտրութիւնը փոխուեցաւ և դատա-
կան գործոց նախարարութեան նոր թէգքերէ
մը կը հրամայէր խառն ժողովով պատրիարքական
տեղապահի ընտրութիւն կատարել:

Այս նոր որոշումով թիւրք կառավարութիւնը
մտաշփոխ չը չեղեցաւ ու չը հակասեց իր նախ-
կին որոշման և նպատակին: Այս որոշումը նոյն
նպատակը ունէր, նոյն դաւադրութիւն էր սահ-
մանադրութեան և ազգային ժողովը դէմ, ինչ որ
առաջին թէգքերէն, բայց ուրիշ ձևի տակ, որով
կը յուսան խաղել թէ խառն ժողովը անդամնե-
րուն և թէ ամբողջ ազգը: Արտօնելով պատ-
րիարքական տեղապահի ընտրութիւն և իրենց
ընտրելի տեղապահ ընտրել տալով, կառավա-
րութիւնը իր մտադրած նպատակին կը հասնէր:
Պատրիարքական տեղապահի ընտրութիւնը ար-
թիւնները նորոգած, այնուհետեւ պատրիարքա-
կան ընտրութիւնը այսօր վաղը ձգելով, ամիս-
ներ, տարիներ կրնար ձգձգել, մինչև որ օր մը
ալ, պատեհ առթիւ մը թէգքերէնով մը տեղապահ
պատրիարք կը հաստատուէր և ալ ամեն զլխա-
ցաւէ ու հիւանդութեան կազատէր:

Կառավարութեան խաղի հոս ալ քարի հանդի-

լի յօդուած, որի հեղինակն է ոմն Մակիեւսկի-
Զուբով, որ իբրև թէ այդ լրբը տողերը գրել է
Թիֆլիսից:

Յարձակվելով բազմաթիւ լրագրի խնդիրները,
Մոսկվայի տերահազակ լրագրի խնդիրները,
առանց որ և է առիթի, առանց որ և է պատ-
ճառի՝ Բազմաթիւ լրագրի խնդիրները, լրագրի
կողմանից հայերի գլխին անտեղի մեղադրանք-
ներ և զրպարտութիւններ:

Ահա թէ ինչ է ստույճն:

«Մեր կողմանից հայերը, ի հարկէ հայրենա-
սէրները, իրանց յանդիմանութեամբ և անհետա-
թեամբ պակաս չեն Ստամբուլից: Գաղթած լի-
նելով Ռուսաստանի անամանները, չնորհիւ մեր
հայազգի գեներալներին հոգաբարձութեան, մերկ և
քաղցած, նրանք չափազանց շուտ յարմարեցին
նոր պայմաններին: Ապա մերկ և քաղցածներին
գարձան հարուստներ և շուտով իրանց ձեռքը
գցեցին Անդրկովկասեան երկրի բոլոր հարստու-
թիւնները: Արեւոյ թիֆլիսը,— և այդ քաղաքը
փոքր չէ,— անցաւ նրանց ձեռքը: Հին ժամանակ-
ները, երբ դեռ հաստատ հող չէին գոլում իրանց
ոտները տակ, նրանք աշխատում էին իրանց աղ-
քաններին բուսաց վերջաւորութիւն տալ,
բայց այժմ դործը ուրիշ կերպարանք է ստացել
— օվ վերջաւորութիւնը կրկին և անց է փոխ-
վել: Ստան ամուսնութիւններին ծնված երեխաները
միտքովով են հայ լուսաւորչական եկեղեցում, մի-
շէ անգամ ուղղափառ մայրերից ծնվածները: Զո-
ւեղ, բաւական ակնյայտի աղիտացիա է լինում,
որպէս զի վերականգնելով Բազմաթիւ լրագրի
մեծ Հայաստանը՝ Ներկայումս շատ քիչ է պա-
տահում, որ արքունական կապալներին հարստա-
ցած հայ վաճառականը կտալով նշանաւոր գու-
մարներ չը թողնէր հայկական գործի համար: Այդ
աղիտացիան բուն է զրկել էլ վաճառականի վաճառ-
ութիւնը, որ հայոց միտքի և հայ հոգեւոր ճեմարանի ներ-
կայացողներին ամենակատարի մրցողներ են
յայտնում: Ուստի իշխանութեան դէմ. մինչև
անգամ հայ չինովնիկները չեն քաշվում պատե-
րազ յայտնի Ռուսաստանին: Նորբուսում Թիֆ-
լիսի նախնական դատարանը, դատաստանական
քննութեան միջոցով, պարզեց, որ Աստուծոյ
ոտնակալութեան պաշտօնները, բացառապէս
«Ռուսական Եկեղեցի» լրագրի ծառայական
պարտաւորութիւններին, քաղաքի բնակիչներին
հրապարակել են տալիս կոտորելու ուսու
ղիւններ և նպատակով են այդ կոտորածին:
«Ստան ամուսնութիւն» լրագրի ծառայական
կանխաման գործը, չը նայելով հայ քաղաքացի-
աների յանդիմանութեան, առ այժմ միտում է իբրև
նախադէմ:

Տեղական ուսու լրագրիները, արտասովորով
«Մոսկ. Вѣдомости» լրագրի նոր աշխատակից
Զուբովի խնդիր արտադրութեան այդ աղափանդ-
ները, մի քանի նկատողութիւններ են անում
«Մոսկ. Вѣд.» լրագրի վերոյիշեալ անմիտ յօդուա-
ծի առիթով: «Нов. Обозр.» լրագրի նկատում է
հետեւեալը:

«Այդ յօդուածի ամեն մի խօսքը մի առակ է,
որ հարաւ անգամ հերքել են կողմանից լրա-
գրիները, որ միմիկ անգամ ծաղրել են ամենքը,
ով դոնէ փոքր ի շատ հասկացողութիւն ունի
կողմանի մասին, և որը, այնու ամենայնիւ, սի-
տեմատիկաբար, յայտնի ժամանակամիջոց անցնե-
լուց յետոյ, տարածում են միջոցներով մէջ լըտ-
րութիւն չը դնող կարեւորութիւնները: Սակայն Թիֆ-
լիսի Բիւսարովի գործիւնը աչքի է ընկնում մի
բանով, այն է, որ ոչ ոք դեռ ևս անմտութեան
անպարկէ հեղուկութեան սիւններին չէ հասել, որ
ուսումնասիրէր հայերին՝ բազմաթիւն աչքի առջև

րէն ոմանց վրա յոյս ունենալ և կը սպասէինք,
որ աղբի այս ամենատապալապից, ամենափա-
փուկ ժամանակները դնէ, ինչէն կրնար օղ-
տակար լինել, կը ջանան վնասակար չըլլալ և
օգտուելով առիթին, վերջապէս 3 տարի ապօրի-
նաւոր պաշտօնակարութիւնէն ետեւ, առանց նոյն
խել մաղի չափ վնասուելու, հրաժարել, քաշուել
և փրկել իրենց անունը, պատիւ և խիղճը:

Մեր յոյժը մասամբ միայն արդարացաւ և ա-
ռաջին օրինակը տուաւ կրօնական ժողովոյ ատե-
նապետ Գրիգորիոս եպիսկոպոս Գովհանիսեան, որ
իր հրաժարականը ուղարկեց պատրիարքարան:
Շատ կը ցաւենք, որ Գրիգորիոս եպիսկոպոսի օ-
րինակին չը հետեւեցին և միւս կրօնական և աշ-
խարհական անդամները:

Ինչպէս հաղորդած էինք, ըստ կայսերական ի-
րաւունքի, փոխարինող հօր ստորագրութեամբ հրա-
ւիրագրերը զրկուեցան կրօնական և քաղաքական
ժողովոյ անդամներուն յունիս 28-ին, չորեքշաբ-
թի, ժամ 11-ին, պատրիարքարանի մէջ խառն
ժողովի գումարելով պատրիարքական տեղապահի
ընտրութեան համար: Գովհանի 28-ի երկրաշարժը
արգելք եղաւ և նշանակված նիստը տեղի չունե-
ցաւ:

Կառավարութեան ստիպումով երկրորդ անգամ
հրաւիրագրեր զրկուեցան, որ առանց յապաղման
յուլիս 13-ին, չորեքշաբթի, խառն ժողով գումար-

ուենալով և բազմաթիւն ուսումնասիրելով հայե-
րին աչքի առաջ ունենալով: Այդ մեծ գաղափարը
կազմում է պ. Զուբովի բացառական սեփական-
ութիւնը:

Իսկ «Тифл. Листок» լրագրի, նուիրելով այդ
յօդուածին մի առաջնորդող, ասում է հետեւեալը.
«Յոստովանում ենք, որ կարգաւոր այդ տղերք
Թիֆլիսում, իւրաքանչիւր իրան այսպիսի հարց
կը տայ. «Արեւոք դործ չունենք մենք մի հոգե-
պէս հիւանդ մարդու հետ»: Մի փանքում, որ գտն-
վում է 20 վերստ հեռավորութեան վրա Երևան
նահանգական քաղաքից, սինոդի անդամները հա-
կալաւորութեան աղիտացիա են վարում, և այդ-
պիսի վերոյիշեցնել փաստը անպատիւ է մնում,
չը նայելով նահանգական բարձր իշխանութեան
և սինոդի պրօկուրորի ժափի լինելուն: Ռու-
սաստանին պատեհաբար յայտնող հայ չինովնիկնե-
րը չարունակում են միայն պետական ծառայու-
թեան մէջ պ. Զուբովի հետ, զինուորներին կատ-
րել ճարմայող ուստիկանութեան պաշտօնները
չարունակում են իրանց ուստիկանական պաշտօ-
նը... Միայն հիւանդ մարդը կարող է թոյլ տալ,
որ մի երկրում, ուր բարձրագոյն իշխանութեան
ներկայացուցիչներն են Կովկասեան կառավարչա-
պետը և հինգ նահանգապետներ, որոնցից ոչ մէ-
կը հայ չէ, հնարաւոր լինէր մտածել անգամ և
թոյլ տալ աղապիսի փաստը: Պ. Զուբովին ամա-
րամասն պատասխանել չէ կարելի, քանի որ մենք
նրան հոգեկան հիւանդ ենք համարում, իսկ «Մոսկ.
Вѣд.» լրագրին մենք կը պատասխանենք հետե-
ւեալը:

«Թողնելով ընթերցողներին իրանց ըստ արժա-
նոյն գնահատելու «Մոսկ. Вѣд.» լրագրի վարմու-
քը, կարող ենք միայն տեղեկանք, որ մամուլի
պարտաւորութիւնն է նպատակ լրագրութեանը,
միտքները և պետութեան անդամներին փոխա-
ղարձ յարգելիք: «Մոսկ. Вѣд.» լրագրի վերա-
բերուածը զէպի օտարազգիներին գործերը միայն
փոխադարձ ատելութիւն է ծնեցնում:

Մենք սպասում ենք, որ այդ տեսակ բոլոր կը
յայտնի և «Кавказ» լրագրի:

Միանգամայն համակարծիք լինելով և համակրելով
տեղական ուսու լրագրիները ասածներին, մենք մեր
կողմից միայն մի հարց ենք տալիս.— արեւոք այդ
անդուստ, անպատիւ, մեղադրանքը մի ամ-
բողջ ազգի հասցէին վերջինն է լինելու, թէ միշտ
էլ զրպարտութիւն է: Եւ ունենանք կարգաւոր
«Московскія Вѣдомости» և դրա նման լրագրութե-
անը այդպիսի զրկելիք, և մի և նոյն ժամանակ
վերին ատիժանով յիմար յօդուածներ:

ՆԵՐՈՒՆ ԼՈՐԵՐ

Յուլիսի 26-ին, Մեծ Խլխանուհի Կսէնիա Ալեք-
սանդրովնայի և Մեծ Խլխան Ալեքսանդր Միխայ-
լովիչի պատկազրութեան առիթով, Կովկասի
կառավարչապետը իր մատուցած շնորհաւորու-
թեան համար արժանացաւ ստանալ Նորին Մե-
ծութիւն Թագաւոր Կայսրից հետեւեալ պատասխան
հեռագիրը. «Կայսրուհին և իս ի սրտէ դապրված
ենք Կովկասի գործերի և ազգաբնակչութեան բա-
րի ցանկութիւնները համար. յանձնարարում ենք
ձեզ շնորհակալութիւն յայտնել բոլորին մեր ա-
նունից: Ալեք. Եւստիպի:

Ուրբաթ, յուլիսի 29-ին, Մեծ Խլխան Ալեք-

սանդրովնայի և Մեծ Խլխան Ալեքսանդր Միխայ-
լովիչի պատկազրութեան առիթով, Կովկասի
կառավարչապետը իր մատուցած շնորհաւորու-
թեան համար արժանացաւ ստանալ Նորին Մե-
ծութիւն Թագաւոր Կայսրից հետեւեալ պատասխան
հեռագիրը. «Կայսրուհին և իս ի սրտէ դապրված
ենք Կովկասի գործերի և ազգաբնակչութեան բա-
րի ցանկութիւնները համար. յանձնարարում ենք
ձեզ շնորհակալութիւն յայտնել բոլորին մեր ա-
նունից: Ալեք. Եւստիպի:

Րուկ և առանց յետաձգութեան պատրիարքական
տեղապահի ընտրութիւն կատարուի:
Կառավարութեան առաջին ընտրելին Բարդու-
ղիմէոս եպիսկոպոսն է, ինքն այդ պայմանով չափ
կը ջանայ իր ընտրութիւնը յաջողեցնելու, բայց
կատար թէ Տիգրան Երուսաղեմեան և քանի մը ջո-
ղեր չառ չեն ստորգրել իրմէ, որովհետեւ քիչ մը
յայտնութիւն ունի և քիչ մը ալ անկախ ոգու
տէր է, ուստի իրենց բանին չի դար: Աստուք կու-
ղին այսպիսի մէջը, որ տեղապահը հուր գործիք
ըլլայ իրենց, որ ուղած կողմը դարձունեն. ու-
ղածին կատարել տան: Այդ իրենց փափագի
յատկութիւններով ու գովելի բարեմասնութիւն-
ներով բնութիւնէն առատապէս օժտեալ անձը կը
դանին յանձնի Օրմանեան եպիսկոպոսին, որը նոյն-
պէս տեղեկաւոր էր տեղապարչ պաշտօնին, ինչ
Բարդուղիմէոսի պէս անհեռաւոր և անզղոյշ չէ
և չի ձայներ, այլ աւելի եղովնաբար կը գործէ
և մտքի մէջ:

Օրմանեան նոյնպէս յայտնի է իր թիւրքմանով-
թեամբ, որը թէ և վարդապետաւոր երկար ատեն կը
թաքնուէր, բայց վերջին տարիներու, մասնաւոր
կաթողիկոսական ընտրութիւնէն ի վեր դիմակը
պատուեցաւ և ամեն ինչ ջուրի երեսն ելաւ:
Կառավարութիւնը իր հաւանութիւնը տուած է և
Օրմանեանի ընտրութեան համար Շրջանի մը մէջ
այնքան հաւանական էր Օրմանեանի ընտրութիւ-

սանդր Միխայլովիչի և Մեծ Խլխանուհի Կսէնիա
Ալեքսանդրովնայի պատկազրութեան առիթով,
Միսի տաճարում հանդիսաւոր գոհացողական
մաղթանք կատարեց: Մաղթանքին ներկայ էին
բոլոր գեներալները, բարձրաստիճան անձինք ու
բազմաթիւ հասարակութիւն: Մաղթանքի ժամա-
նակ տեղի ունեցաւ թնդանթաձգութիւն 21 ան-
գամ:

Այսօր, յուլիսի 30-ին, Մեծ Խլխան Ալեքսանդր
Միխայլովիչի և Մեծ Խլխանուհի Կսէնիա Ալեք-
սանդրովնայի պատկազրութեան առիթով, վանքի
մայր եկեղեցում գոհացողական մաղթանք կը
կատարվի: Այդ առիթով, Թիֆլիսի արհեստագործներ
աւագը դիմեց նահանգապետին, խնդրելով թոյլ
տալ Թիֆլիսի համբարներին ներկայ լինել այդ
մաղթանքին իրանց համբարական զրօշակներով:
Նահանգապետը արդէն թոյլատրեց:

Կ. Պոլսից գրում են Պետերբուրգի «НОВОСТИ»
լրագրին, որ Կ. Պոլսի հայերի մէջ տարածուե-
լիւն կայ զօրեղացնելու Կիլիկիայի հայոց կա-
թողիկոսութեան նշանակութիւնը և աւելի ոյժ
տալու նրան: Չը բաւականանալով այդ միտքի
լուրը հաղորդելով Կ. Պոլսի թղթակիցը մինչև
անգամ ուղում է պատճառաբանել իր տուած
տեղեկութիւնը: Բարեբաղդաբար, այս վերջին տե-
ղեկութիւնն էլ մէկն է այն հաղաբար չինծու,
հնարովի լուրերից, որ ամեն օր պիտի դուրս է
բերում օսմանեան մայրաքաղաքից և տարածում
աշխարհի բոլոր կողմերը:

Վաղը, կիրակի, յուլիսի 31-ին, պրօֆէսոր Անդ-
րէաս Արծրունի Թիֆլիսից պէտք է ուղեւոր-
վի: Նրանից մեկնելով դէպի Արարատ, պրօ-
ֆէսոր Արծրունին նախ մտադրութիւն ունի բարձ-
րանալ Արարատ սարը, ապա վերադառնալով
Երևան, կանցնի Էջմիածին, Էջմիածնից Իգդիր,
և ապա պէտք է ուսումնասիրի Արաբած սարը, յե-
տոյ մի քանի օր Էջմիածնի մէջ, ապա էլ անի
Նոր-Բաղդադի և Սևանի լճի կողմերում: Այ-
ցիւրու է Անի, Ալեքսանդրօպոլի, Կաղզուան և
Կողբ: Համապարօրդութիւնը կը տեղի մէկ և կէս
ամիս:

Սանասարեան զպրօքի վարչութեան հրատա-
րակած տեղեկագրից քաղում ենք մի քանի տե-
ղեկութիւններ. «1890—91 ուսումնական տար-
վան վերջը աշակերտաց թիւն էր 122, ո-
րոնցմէ պակասեցան 21 ընթացաւարտը և 2 ա-
շակերտը, և մնացին 99 հոգի: Սոցա վրա այս
տարի աւելացան 22 թոշակաւոր և վեց ձրիա-
վարժ նոր աշակերտներ, որով տարուան սկիզբը
վարժարանը ունէր, առանց հաշուելու Արհես-
տանոցի 8 ձրիավարժ երթևեկ աշակերտները, 127
աշակերտ, ամենքն ալ զիշերթիկ: Գոցանէ 102-ը
թոշակաւոր էին և 25-ը ձրիավարժ: Սոյն տա-
րվան համար երկրին զանազան կողմերէն թոշա-
կաւոր աշակերտաց մասին եղած ծանուցումները

նը, որ նիստի հետեւալ օրը տեղական եւրօպա-
կան թերթ մը, առանց ստուգելու, հրատարակեց
թէ պատրիարքական տեղապահ ընտրուեցաւ Օր-
մանեան եպիսկոպոսը:

Վերջապէս ամսույ 13-ին տեղի ունեցաւ տե-
ղապահ ընտրութեան համար նշանակված նիստը:
Ներկայ գտնվեցան նիստին փոխանօրդ ձեկանի-
ճեանէն դատ մէկ վարդապետ և 3 քահանայ
ապօրինի կրօնական ժողովէն և Տիգրան Երուսա-
ղեմեանէն դատ 3 հոգի ապօրինի քաղաքական ժո-
ղովոյ անդամներէն:

Պաշտօնական յայտարարութիւնը, որ միւս օրը
կառավարութեան ստիպմամբ լսմադրուեցաւ և
տեղեկացաւ հայ և օտար թերթերու մէջ սպա-
գրուեցաւ, հետեւայն էր. «Երկրաները սպասեցին
մինչև 7 1/2 և մեկնեցան, յայտարարելով, թէ օրի-
նական թիւ չունեն տեղապահ ընտրութեան
ձեւնարկելու համար»:

Համարութիւնը այդպէս չէ: Ներկաները երբ
կը տեսնեն, որ իրենց միւս ընկերները, կրօնա-
կան ժողովոյ ատենապետը չեկան, երկար խորհո-
ղակցութեան ետքը, կրօնական ժողովոյ անդամ-
ները հետեւելով վերջապէս իրենց ժողովոյ ատե-
նապետին, նոյնպէս կը ստորագրեն թերեւ հրա-
ժարականը՝ սակայն որ իրենք անձեռնառն են
որ և է ընտրութիւն կատարելու, որովհետեւ 3
տարի է ի վեր լրացած է իրենց պաշտօնակարու-

կը հասնէին 40-ի, բայց միայն 22-ը եկան թէն
շատ մը քաղաքներ Տեսչութեան զիմում ընելով
ընթացաւարտներէն ուսուցիչ խնդրած էին իրենց
զպրօքներուն համար, սակայն Տեսչութիւնը լուա-
գոյն համարեց, որ իւր անդամին ձեւնաստաններ
տարի մը ևս մնան վարժարանի մէջ և, իբրև
օգնական-ուսուցիչներ գործելով՝ յատկապէս պատ-
րաստվին ուսուցչութեան պաշտօնին»:

Իր անթիւ «գեղեցիկ յատկութիւններին» «Ար-
ձագանքը» վերջին ժամանակներս աւելացել է
մի նոր յատկութիւն,— դրա կ'ան գո ու թ իւ ռ իւ
Որդմէկ թերթը կարծում է, որ իր դատարկ է-
ջերը լցնելու համար կարելի է յօդուածներ, բա-
նասիրականներ արտատպել, առանց յիշելու աղ-
բււրը: Մի ապացոյց: Մինչև այսօր «Արձագան-
քը» արտատպում էր «Հայրենիք» լրագրից յօ-
դուածներ, ամբողջ բանասիրականներ և տալի
դնում էր միայն այսքան՝ «Հայր», փոխանակ
գրելու «Հայրենիք»: Իսկ վերջին համարում
«Արձագանքը» արտատպելով մի ամբողջ բանա-
սիրական, «Վանքներու» բարձրէն, վերնա-
գրով, չէ յիշում, թէ որտեղից է վերցրել, և ան-
կասկած յոյս ունի, թէ իր միամիտ ընթերցողները
կը կարծեն, որ այդ էլ իր «ամեն տեղից քշված
աշխատակիցներին» հիւանդ ուղեղի արտադրութիւնն
է: Բայց ի՞նչու: Աւետում ենք «Արձագան-
քին» ընթերցողներին, որ այդ բանասիրականը
զոյգալով է «Հայրենիք» լրագրից: Միթէ
«Հայաստանաց եղբայրներին» խումբը կարծում
է թէ դրա կ'ան գո ու թ իւ ռ իւ ռ ն էլ ազգասիրա-
կան առաքելութիւն է...

Վհայտաւ Կաթողիկոսի հրամանով Ներսիսեան
զպրօքի տեսչի պաշտօնակատար Կարապետ Կոս-
տանեան նշանակված է Էջմիածնի ճեմարանի
տեսուչ: Մենք կոտորաններ մանկավարժական
գործունէութեան համակրող չենք, և բոլորովին
դէմ ենք նրա գործունէութեան ուղղութեան և
ոգուն: Բայց չը նայած դրան, մենք, սկզբունքի
ապագայով, ամբողջ սրտից նորբարութեան ենք
վհայտաւոր եւրօպացիութիւնը, որ նա հնարաւոր
է գտնել հոգեւոր ճեմարանի տեսուչ նշանակել
մի աշխարհական մարդ: Քիչ առաջ այն
կարծիքն էին, որ անկարելի է հոգեւոր ճեմարանի
տեսուչ նշանակել մի աշխարհական մարդ,
և սկզբունք ընդունելով որ տեսուչը անպատճառ
հոգեւորական պիտի լինի, այնպիսի հոգեւորական-
ներ էին նշանակվում ճեմարանի տեսուչ, որոնք
վերակացուի պաշտօնին էլ արժանի չէին: Ուստի
չառ ուրախ ենք, որ կաթողիկոսական վերջին
կարգադրութեամբ (նոյն իսկ չը համակրելով նը-
շանակված աշխարհական տեսչին), բոլորովին
ոչնչանում է այդ միակողմանի և անմիտ կար-
ծիքը:

Կովկասեան Գեղարտեստական ընկերութեան
մէջ առ մի քանի շաբաթ է, որ տեղի են ունենում
նիստեր՝ մշակելու այն խնդիրները, որոնք պէտք է
բարդն:

Թեմական ընտրութեան և իրենց ըստ օրինի
դադարեալ են այսօրուանէ իրենց պաշտօնէն: Հրա-
ժարակներ կը ձգեն կրկին պատրիարքարանէն:
Քաղաքական ժողովոյ ատենապետը այս անպա-
սելի դէպքէն սարսափահար և խելարդոյտ, իր 3
ընկերակիցներով նոյնպէս կը մեկնի:

Հետեւալ օրը պատրիարքարանէն պաշտօնա-
զրու մը դատական գործոց նախարարութեան
հաղորդուեցաւ տեղապահի ընտրութեան համար
չորեքշաբթի օր գումարուած խառն ժողովի նը-
տին արդիւնքը:

Կառավարութեան վրա ծանր տպաւորութիւն
ըլլած է կրօնական ժողովի անդամներու այս արա-
քը: Կառավարութիւնը խիստ հրահանգներ զրկեց
տեղական հայ և օտար թերթերուն, որ տեղապա-
հի ընտրութեան համար ամենին բան մը չը դը-
րուի: Ահա իրաց իսկական վիճակը:

Կրօնական ժողովի անդամներու վերջին ըստ
ժողովրդի վրա ընդհանրապէս շատ բաւ տղաւոր-
ութիւն գործեց. ժողովուրդը մասամբ հաշտուեց
և անուց 3 ամեայ գործած մեղքերը, զեղծու-
մանը, ապօրինի պաշտօնակարութիւնը վայրկեան
մը մոռացութեան տուաւ:

Ի—րով

ներկայ
սեպտեմ-
այմ
պատմ
րութեան
վորձն
մասնա
դեռ չէ
խնդրե
րոց,
խնդրե
խաղա
խորհու

ներկայացվին երկրագործութեան միջնորդին, սեպտեմբեր ամսին, երբ նա կը գայ Ռիֆլիս: Առայժմ որոշված է խնդրել, որ միջնորդը ներկայացնէ Վոլկաստան գիւղատնտեսական ընկերութեան բանալու օրինակելի ագարակներ և փորձնական կայարաններ, և պահելու սեփական մասնագէտ գործավարներ: Միւս խնդիրները, որոնք դեռ չեն ստացել վերջնական ձև, հետևեալներն են. խնդրել, որ Վոլկաստան բացվի բարձրագոյն դպրոց, պոլիտեխնիկում՝ գիւղատնտեսական բաժնով, խնդրել, որ միջնորդը կողմնակաւ լիազօրի նախագահութեամբ՝ հաստատուի գիւղատնտեսական փորձնադէպ հարցերը քննելու համար. խնդրել, որ Անդրկովկասի անապատների և ուրիշ անջուր տեղերի ոռոգման և ջրաբաշխութեան գործը շտապեցնուի:

Պետերբուրգում մի յատուկ յանձնաժողով է կազմված, որը պէտք է միջոցներ գտնի՝ գանձարանի և մասնաւոր անձանց իրաւունքները հաստատելու համար Բաթումի և Կարսի շրջաններում գտնված հողերի վրա: Գանձարանի նախագահ՝ Նախակովմա է. Տիխոնով, անդամներ՝ Նախակովմա են մի քանի միջնորդութեանները կողմից: Կողմակից յանձնաժողովի անդամներ են Նախակովմա վեջնադատում և Սաղմարէի ձէ:

Մեզ խնդրում են տպագրել այս երկրորդ արդարացի նկատողութիւնը. «Արձագանքը» կողմնակի կերպով խոստովանելով, որ Վաղարշ Աղա յանի, Լեւոն Սարգսեանի, Ստ. Մակիսեանի և Լ. Մանուկեանի մասին իր հաղորդածները սուտ են, այնուամենայնիւ իր ասածը Գովհանէս Գովհանի սեանի մասին: Նա ասում է. «Այդ մի փաստ է որ պ. Գովհանէս Գովհանիսեան Մոսկվայի համալսարանի պատմական—լեզուաբանական բաժնի կանդիդատ է: Վաղարշ գրեւորով էլ կապացուցանեմք: Սպասում ենք, որ Արդար Գովհանիսեան կատարի իր խոստումը, այսինքն ապացուցանի, որ իսկական ուսանողի դիպլոմ ունեցող Գովհանէս Գովհանիսեանը կանդիդատ է: Երեւի ինքը Գովհանէս Գովհանիսեան մեզինքն աւելի կը զարմանայ այդ ֆոկլորի վրայ:»

Թիֆլիսի առաջնորդարանի կողմից ուղարկված է մեզ հետեւեալը, իբրև պատասխան «Մշակի» 84-րդ համարում, Նիկտարիստիկայի գրած լուրի. «Նիկտարիստիկայի Գարեգին քանոնայ Բաղդասարեանը ձեռնադրված է Եւփիանի սինոդի 1890 թվ. յուլիսի 21, № 2772 հրամանով և յատուկ բարեհաճութեամբ հանգուցեալ Մակար կաթողիկոսի:»

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ փոխատու արկղերի տէրերի գանազան տեսակ զեղծումներին վերջ տալու համար, հարց է յարուցված վերափոխել փոխատու արկղերին և լծաբարդներին վերաբերեալ օրենսդրութիւնը:

Յուլիսի 28-ին մի ամբողջ օր քաղաքում բուրդով ջուր չը կար: Ջրանցքը ցամաքել էր և քաղաքի բնակիչները նոյն իսկ խմելու ջուր չունէին: Դա ներքին կը լինէր, եթէ առաջին անգամը լինէր, բայց այդ երեւոյթը թէ անցեալ տարիները և թէ այս տարի արդէն սովորական է դարձել և մեր քաղաքային վարչութիւնը ոչ յուշվում է, ոչ կարծում և ոչ էլ ամաչում, երբ ամառայ այս ջրերին քաղաքը զրկված է ջրից: Միլիոն են ծախսել, ջրանցք կառուցել, զրկել են բնակիչներին Կուրից ջուր վերցնելու իրաւունքից, անապին փող են վերցնում ամեն մի կաթիլ ջրի համար—և այդ բոլորից յետոյ ամիսը մի քանի անգամ կերակրում են ազգայնականութեանը գանազան հեքիաթներով, թէ ջուր չը կայ: Եւ դա կոչվում է քաղաքային ինքնավարութիւն, որ իբր թէ մտածում է քաղաքացիների մասին...

Կարսի վիճակի փոխանորդ Նահապետ վարդապետը խնդրում է մեզ տպագրել հետեւեալը. «Այրի Սրբուհի Գարակիւնեան ուղարկելով ինձ 150 ռուբլի, ի յիշատակ իր հանգուցեալ ամուսին Գարակիւնեանի, գրաւոր խնդրել է բաժանել հետեւեալ կարգով.—50 ռ. քաղաքի և երկուսու դպրոցներին, 30 ռ. Կովկասի Հայոց բարեգործական ընկերութեան տեղական ձեռքի վար-

չութեան, 20 ռ. Գրիգոր Արծրունու գրաւորներ, իր տպագրութեան և արձանին. 30 ռ. անանկ աղքատներին և 20 ռ. քաղաքի ս. Աստուածածին եկեղեցուն: Ուղարկելով խմբագրութեանը յիշեալ քանոնը, որ յատկացրած է Արծրունու գրաւորների տպագրութեանը և արձանին, խնդրում եմ «Մշակի» մէջ տպագրել ներկայ նուիրարբերութեան մասին:»

ՇՈՒՇՈՒՅ մեզ գրում են. «Ստոր ինտրիգները մեր քաղաքի մէջ հասել են իրանց գագաթնակէտին: Մի քանի լատիւս անձինք առանց միջոցների մէջ խորութիւն դնելու, երգիւթական ներք միջոցներով աշխատում են սղտորել մտքերը: Եւ ուղիք են դրանք. մի պատի ֆլեթիստ, մի քանի արտաքսովաններ, և մի քանի ինտրիգաններ, որոնց մէջ ամենաառաջինը այն մարդն է, որը յայտնի է այստեղ նրանով, որ իբր հոգաբարձու ստիպել է վարժուհուն իր եղբւրջները մաքրել. այդ սև և ստոր ինտրիգները վերջնականապէս զրկելով են հասարակութեանը Ամենքն էլ րօպէ առ րօպէ սպասում են, թէ արդե՞ք վերջապէս կը սանձադաւլի այս բոլորը, թէ կամայականութեամբ և կողմնապահութեամբ էլի պէտք է շարունակեն տակն ու վրա անել ամեն բան:»

ԱՅՈՒՄԱՅԱՅԱՅ գաւառի Արագոյ վանքի մեզ գրում են. «Վայ մի հաստատ կարելի է ասել, որ Ախալքալաքի գաւառի ցանքերի դրութիւնը ապահովված է՝ չնորսել վերջերս եկող անձրևներով: Այդ կողմից գիւղացիների ուրախութեանը չափ չը կայ, բայց խառն պահասութիւնը չուարեցրել է խեղճերին, փողը ձեռին այս կողմն այն կողմն են ընկնում և չեն կարողանում ոչ մի տեղ քաղելու խոտ գտնել: Երեւում է, որ խառն պահասութեան պատճառով անասունների մեծ մասը այս աշնան պէտք է ծախեն, ի հարկէ խիտ է ծանր զնով: Զարմանալի անհեռատես մարդիկ են հայ գիւղացիները. երկրի տարիների փորձից չը կարողացան սովորել, որ առաւ տարիների բերքից պէտք է խնայել անապոյ տարիների համար: Այս կողմից աւելի հեռատես են Ախալքալաքի գաւառում բնակվող գուլթուրները, որոնք մի քանի տարիների խոտի պաշար են պահում և անապոյ տարիներին նեղը չեն ընկնում և իրանց անասունները կիսաբնով չեն ծախում:»

ՍՆԱՅԱՅ մեզ գրում են. «Վրանից մի քանի տարի առաջ Մոսկվայեան Լիանոզեանը նուիրել էր այստեղի հայոց երկսես ուսումնարանին իր երեք յարկանի տունը, մօտ 5—6 հազար ռուբլի արժողութեամբ, այն պայմանով միայն, որ ուսումնարանը կրէ իր անունը: Այս գործը առաջարկված է եղել հասարակութեան ընկեւո համար: Հասարակութիւնը, անցեալ տարի կայացած իր ժողովում, որոշել էր՝ ընդունել Լիանոզեանի առաջարկութիւնն այն դէպքում միայն, եթէ վերջինը համաձայնի իր վրա առնել ուսումնարանի բոլոր ծախսերը, հիմնվելով այն հանգամանքի վրա, որ Լիանոզեանի տան եկամուտն անկարող է ծածկել ուսումնարանի տարեկան ծախսերի նոյն իսկ քառորդ մասը: Այժմ հաստատ տեղեկանում ենք, որ Բարձրագոյն հրամանով որոշված է անուանել ուսումնարանը «Լիանոզեան»: Այս հանգամանքը բարոյական պարտականութիւն է դնում պ. Լիանոզեանի վրա չը բաւականապէս արած նուիրութեանը: Այլ ընդարձակել բարեգործութեան ծաւալը: Շատ հեշտ է պ. միլիոնատերին, որը հարկեր հազարներ է ընծայել Աստուածային, մի փոքր ուղարկութիւն դարձնել իր խաւար ծննդավայրի վրա՝ կատարաւապէս ապահովացնելով իր անունով կոչվող ուսումնարանը:»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԱՆՆՅԻ ՊԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

«Ամեն վանքի թախտութեան օր մը ունի, իր տուն ու տեղը, մայրն ու փառքը, վար ու վաստակը, արտն ու ալիքն, կիջն ու մաքրն իրանի: Եւ օրը.—դա պանդխտութեան օրն է:»
«Պատը երկիրներ կանդիստելու կորստաբեր սովորութեան սկիզբը շատ հին է. իսկ պատճառները բազմազան են:»
«Քսան տարեկան ըլլալ ու տակաւին հօր կամ

ազգականի շաւղին չը հետեւի որչափ ամօթ է:»
«Ով որ Պօլիս տեսած չէ, մարդ չէ, կըսեն անոնք որ այդ մեծ քաղաքի հանդիմանը համոտեւ ըրած են.—գրում է «Հայրենիք» լրագիրը:»

«Ես տանըմէնդ սէ ֆէր ունիմ, և ամէն անգամ հարկերն աւելի դեղիններով, մետաղներով դարձած է կըսէր հայր մը, որ Եզրիպտոսի մէջ այլ վաղութեամբ մաշած էր իր երկտաւարութիւն և որուն գաւառները հօր ճամբուն հետեւեալ անգույ փափաքն ունեցան, սակայն անպաշտ մնացին ու խաղալիլ բաղդին ձեռքը:»

«Ես եօթն անգամ չափած եմ Սև ծովու տարածութիւն երբ եօթն տարեկան էի», կըսէր պարծնաբով ուրիշ մը:

«Ես Ղալաթիոյ սալապատակին վրա քալած պահուն, չըլի մը դտայ, առաջին անգամ իբրև անպէտ նիւթ մը նետեցի, բայց յետոյ ծեցցայ ու վերադի. քսակ մըն էր, հարկեր յետոյ լիւրալով լեցուն, առի ու վրան միմիայն (վրան խնդալ, վայելել), անորով տուն և տեղ կաղմեցի, կը բարոյախօսէր քանոնայ մը, որուն գաւառներն այսօր անհայտանալի վիճակի մէջ են:»

«Ընտանիքի անդամներէ դատ, ամեն ոք կը քաշալիքէ պանդխտութեան մոլորութիւնը, գործնական օրինակով ու լեզուի թովիչ ճարտասանութեամբ: Մեղը է, մեղը, մտաւեցէ: Բնական է, որ արգահատողներ ալ կը գտնուին բապառաբար, սակայն անոնց քարոզը ապաւստի կը բաղդի:»

«Տես, որդեակ, եօթ գաւառ ունիմ, տունս չէն եմ, վաստակ չաղող, դուռս միշտ բաց հիւրերու առաջ, փառք Աստուծոյ կարօտ չեմ, վաճառուն տարեկան եմ, Արճակի դիւղէն անդին չեմ անցած, ինչպէս պակաս: Արի դու էլ ետ կաց այդ ճամբայն, ինչպէս մօրը արցունքին, մեղք է մամիկը: Ինչպէս իմ ծերութեանս, կը պաշտէր հայր մը իր զաւկին, որ չանապով հօր, այսօր թափառական կը պտըտի, ով դիտէ ուր և ինչ վիճակի մէջ:»

«Մամիկներ կըսն իրենց գաւառներու այս մահուան չափ դառն որոշման լուրը, ալ համոզեալու փաստ և օրինակ չի մնար որ չը գտնեն ու չը խօսին իրենց ծանօթ բոլոր բարոյաւորները, որոնք դժբաղդաբար սակաւաթիւ են, իբր կենդանի ապացոյց կը բերեն. երբ անգոր մնան իրենց ճիգերը, աղօթքի, խոնկ ու մտի, ուխտ ու խոստումներու կը դիմեն, կրօնքը իրենց դժբաղդ կանչելով:»

—Որդի, արի վաղ եկուր այդ չար մտքէն. եղտուն եւ մի քաշեր (մի յամառել): փառք Աստուծոյ, ձեռք, ոտք, պալաւն չէ՝ ներս դուրս արած, զեղքաղք արած, զո տուն ու տեղէն մի գատնաբ, քո տէրութիւն լանկով (աքացի) մի դարներ. դուք տառեցէ (աշխատել) մեղք կը շարապրենք (անտեսել) հասուցողը, հուն հանդիմանումս: Եւ մարդ անօթի մնացեր է այս քաղաքի մէջ: Արի, մի ընեւ, մի երեւ, քո պատու մամիկը տարտամահ մի ընեւ, դերեղմանս ձեռքով մի փորել: Երեւ դաւընդիւրս մեծուռն ինչի է՝ տաս տարի է, որ աչքէս կորուսած են, ինչի է անոնց վատտակ, քանի որ սեղանին բոլորը չեմ տեսներ դանտը:»

Եւ քանի քանի սպաւոր մայրեր կան, որոնք ողբում են իրանց գաւառների պանդխտութիւնը...

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՅԻՅ

Ուսթը, յուլիսի 20-ին
Պարտը կը համարիմ հաղորդել հետեւեալ տեղեկութիւնը, որ անշուշտ կը հասնի հրատարակել: Եւփիանէն սպրիլ 12 թուականաւ դրուած նամակ մը և մարտ 28 թուականաւ կոնգրեսներ ընտանաւ ամերիկացեան հայոց հոգեւ հովիւ, որուն պատուէր կը տրուէ ի նպաստ Առաջիկայի գաղթական սովեալ հայոց մերադնէից օժանդակութիւնը խնդրելու: Ղրա համեմատ, մեր հոգեւոր հովիւը հետեւեալ քաղաքաց և զիւրօրէից մէջ հանգանակութիւն կատարելով, սա արդիւնքն ունեցաւ:»

Ուսթը, 153 դուրա 50 սենթ, փրօվախէս, 131 դ. 75 ս., Լին, 112 դ. 45 ս., Պոսթօն, 95 դ. 50 ս., Լովել, 53 դ. 20 ս., Մօլտըն և Ֆելտ, 57 դ. 90 ս., Ուսթը Թալուս, 33 դ., Վալտայքթ, 28 դ. 85 ս., Պրայմըն, 25 դ. 50 ս., Ուայթմա, 25 դ. 25 ս., Փոսթմաքթ, 25., Քէյպլիք փրթ, 23 դ., Ֆիլպրիլ, 20 դ. 80 ս., Միլիլ 12 դ., Լոսնէն 8 դ. 90 ս., Ընդամենը 806 դուրա 60 սենթ: Մոյն հանգանակած գուժարը յուլիսի 6-ին Պոսթօնի դրամատան չէնով մը զրկուեցաւ Լյօմիածին, Վահագնա Մկրտիչ Կաթողիկոսին:

Առ այժմ այսչափ դուժար զրկուէն յետոյ, յուսալի է, որ Նիւ-Եօքէն, Ֆիլադելֆիայէն և այլ հայաբնակ վայրերէն ևս բաւականաչափ օժանդակութիւն պիտ ըլլայ մերադնէից կողմէն յօգուտ սովեալների:

Կ. Սանթոյան

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԿԻԱՅԻՅ

Բաղէշ, յուլիսի 10-ին

Կարինի և Բաղէշի վիլայէթներում տեղի ունեցած այս երկու տարուան սովից հազարաւոր ընտանիքներ գաղթեցին աշխարհիս այլ և այլ կողմեր, թողնով իրենց սեփական անշարժ կալուածները, հայրենի հողը և բնակութիւն. շատերը ցրտէն ու քաղցէն մոռան, շատերը կորսն և գրեթէ բոլոր բնակիչները մեծ թշուառութիւնների և անբաղգութիւնների մատնուեցան:

Կարինի կուսակալութեան ներքև եղող ժողովուրդը, սուլթանի հրամանաւ բաշխուած սերմացու ցորենը ժամանակին ձեռք բերելով, կրցաւ յաջող ցանք և այսօր առատ հունձք ունենալ, որով թերեւս պիտի մի փոքր թեթեւանայ կարօտեալ ժողովրդի վիճակը:

Գալով Բաղէշի կուսակալութեան ներքև եղող ժողովրդին տրուելը դրամներուն, ինչպէս քանից արքունական անդուէն տրուեցան դրամներ, բայց չինուած մուրհակների կէտը կաշառք եղաւ, իսկ կէտն հազիւ երկար միջոցներէ վերջը փոխառուներուն տրուեցաւ: Շատերէն օրինակ մը բերենք:

Գարնանը Բաղէշի, Մուշի և Պոլսանցի գիւղացուց սերմացուի համար բարձրագոյն հրաման եղաւ, որ անմիջապէս 7,500 օսմանեան ոսկի տրուի արքունական անդուէն տրուեցան դրամներ, բայց չինուած մուրհակների կէտը կաշառք եղաւ, իսկ կէտն հազիւ երկար միջոցներէ վերջը փոխառուներուն տրուեցաւ: Շատերէն օրինակ մը բերենք:

Կուսակալն բաղէշի Պաղատեան Աղաջան է-Ֆէնդու հետ, որն որ վարչութեան անդամ է և նորա կամակալտուր, ընկերաւորով, տառնուհինգ հազար քիլէ ցորեն աճուրդի դնելով՝ քիլէն 55 դրուշ ոսկի դրամով յիշեալ Աղաջանի և նորա եղբայր վրա հաստատեց, մինչդեռ քիլէն երեսուսուսուրթ դրուշ և աւելի պակաս արժէքով ցորենատէքը թախանձելով կը ծախէին աւանդին: Ժողովուրդը տեսնելով որ, եթէ ցորեն աւանտ մէկ քիլէ՝ այնչափ պարտք կունենայ, որչափ որ կունենար, եթէ դնէ որեւի ցորենատէքէ մը մէկ ու կէս քիլէ, ուստի իր առուտուրի մէջ 50% տարբերութիւն տեսնելով՝ յատուկ խնդրագրերով հարկւրաւոր անձինք դիմեցին կուսակալին և խնդրեցին, որ սուլթանի հրամանի համաձայն իրենց դրամ տրուի և երթան աճան դնով սերմացու ցորեն դնեն, բայց անյանի եղան այս տեսակ խնդիրները Անշուշտ կուսակալը միայն իր բարեկամ Աղաջանին վաստկեցնելու նպատակաւ չէր, որ քիլէ ցորեն փոխանակ երեսուսուսուրթ դրուշ, յիսուսուսուրթ դրուշով դնեց անկէ, այլ ազատելու այն պարտատուրհակը, զորն իր որդին Կ. Պօլիս տուած (Պօլսի մէջ գտնուած տունը գրաւի դնելով) և հազար հինգ հարկւր օսմ. ոսկի առած ու ծախսած էր: Ահա փոքր առուտուրի մը մէջ մեծ վատտակ մը:

Ուստի այս խնդրոյ վրա երկար բարակ խօսք և զրոյց լինելով, յիշեալ Աղաջանն ալ սերմացուն ժամանակին տալ չուղիւղով, չկարոնէ, ճամբու վարձքը՝ թանգ է ըսելով՝ եղած ցանքն յետ մնաց, և ժողովուրդը առաջիկայ տարուան ուտելիքի մասին մեծ տախանայի մէջ է:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Temps» լրագիրը բերում է մի բարձրատիճան հուպանացու կարծիքը Կորէի դրութեան մասին: «Կորէի ֆինանսները.—առում է հապոնացին.—չստ վատ դրութեան մէջ են գտնվում: Հարկերը շատ անկանոն են վճարվում, ազգաբնակչութեան աղքատութեան պատճառով: Կորէի արևմտակրատիան ոչինչ չէ աւանտ և զբաղված է միայն գիւղացիներին ճնշելով: Նահանգապետները շատ թանգ են վճարում իրանց տեղերի համար և այդ պատճառով ամեն կերպ աշխատում են ծծել ժողովրդի արկուն: Այդ դրութիւնից օգուտ է քաղում շատ զօրեղ կրօնական մի աղանդ, որը աշխատում է զրոգել ժողովուրդը օտարազգիների դէմ և մահաւանդ հապոնացիների դէմ, որոնք մեղադր-

